

**ԵՐԵՎԱՆԻ «ՄԻՏԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՄԱՐՏԻ ԴՊՐՈՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Նախագիծ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի «Միտիթար Սեքստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կրթահամալիր) բազմամարտի դպրոց ուսումնական կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) կրթահամալիրի մասնաճյուղ է:
2. Կենտրոնի ղեկավարին (այսուհետ՝ Ղեկավար) կրթահամալիրի տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):
3. Կենտրոնը իրավաբանական անձ չէ, չունի առանձին հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
4. Կենտրոնը Կրթահամալիրի կողմից լիազորված է իրականացնելու կրթահամալիրի գործունեության առարկայից, նպատակներից և խնդիրներից բխող գործունեություն:
5. Կենտրոնի կանոնադրությունը և դրա փոփոխությունները Տնօրենի ներկայացմամբ հաստատում է Խորհուրդը:
6. Կենտրոնը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կրթահամալիրի և կենտրոնի կանոնադրություններով:
7. Կենտրոնը կարող է ունենալ չկողմավորված կնիք, ձևաթուղթ և խորհրդանիշ:
8. Կենտրոնն ունի էլեկտրոնային բլոգ, որը գործում է որպես Կենտրոնի պաշտոնական տեղեկատվական օրգան, զանգվածային լրատվական միջոց:

9. Կենտրոնը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կրթահամալիրում սահմանված կարգով կարող է համագործակցել այլ հաստատությունների, (այդ թվում՝ օտարերկրյա) և կազմակերպությունների հետ:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

10. Կենտրոնի գործունեության առարկան հանրակրթական, միջին մասնագիտական, արտադպրոցական (նախասիրական, լրացուցիչ) հեղինակային կրթական ծրագրերի իրականացումն է:
11. Կենտրոնի գործունեության նպատակներն են՝
- կրթահամալիրի դպրոցների ուսումնական պլաններով որոշված ֆիզիկական կուլտուրա և անվտանգ կենսագործունեություն բնագավառի դասընթացների շրջանակներում եռամարտի, հնգամարտի և դրանց բաղադրիչների կազմակերպումը.
 - սովորողների և մեծահասակների լրացուցիչ կրթության կազմակերպումը.
 - մրցումների, մրցաշարերի կազմակերպումը:
12. Ուսումնական կենտրոնի խնդիրներն են.
- եռամարտի, հնգամարտի ուսուցման հեղինակային ծրագրերի մշակումը և կազմակերպումը
 - եռամարտի, հնգամարտի լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Կենտրոնի կառուցվածքը Տնօրենի ներկայացմամբ հաստատում է Խորհուրդը: Իր կանոնադրական նպատակները և խնդիրները լուծելու համար կենտրոնն ունի ձիեր, մանեթ, օգտվում է կրթահամալիրի մարզադաշտերից, մարզասրահներից, լողավազանից, Արատեսի դպրոցական կենտրոնից՝ մայիս-հոկտեմբեր ամիսների նաև ճամբարներից:

14. Հանրակրթական դասընթացները կազմակերպվում են ըստ կրթահամալիրի դպրոցների դասացուցակների:
15. Կենտրոնի մարզիչները կրթահամալիրի մանկավարժական աշխատողներն են:
16. Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է ուսումնառության պայմանագրի համաձայն:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

17. Կենտրոնի ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Ղեկավարը:
18. Կենտրոնի ղեկավարը՝
 - կազմակերպում և ղեկավարում է կենտրոնի ընթացիկ գործունեությունը
 - Խորհրդի հաստատմանն է ներկայացնում կենտրոնի զարգացման ծրագիրը. համակարգում է կենտրոնի կազմում գործող ակումբների աշխատանքը.
 - կազմակերպում է սովորողների ուսումնական գործունեությունը
 - ստեղծում է սովորողի և ուսուցչի առողջության, հիգիենայի, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ.
 - վերահսկողություն է իրականացնում կենտրոնի ինքնասպասարկման աշխատանքների կազմակերպմանը.
 - հետևում է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարմանը և պահպանմանը.
 - սահմանված կարգով ներկայացնում է կենտրոնի գործունեության կիսամյակային, տարեկան հաշվետվությունները.
 - օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենքների, հիմնադրի, նախարարության, Խորհրդի, Տնօրենի որոշումների, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.
 - կենտրոնի աշխատանքները կազմակերպելու համար Տնօրենին առաջարկություն է ներկայացնում աշխատողներ ընդունելու մասին.

- կատարում է Տնօրենի հանձնարարություններ:
19. Ղեկավարի բացակայության դեպքում, Տնօրենի որոշման համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

V. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20. Տնօրենը կրթահամալիրին օգտագործման հանձնված և կրթահամալիրի սեփականություն հանդիսացող գույքից ամեն տարի կենտրոնի հատկացնում է գույք, միջոցներ:
21. Կենտրոնի ղեկավարը պատասխանատու է կենտրոնին հանձնված տարածքի, գույքի, սարքերի պահպանման և խնամքի համար:
22. Կենտրոնի ֆինանսական միջոցները գոյանում են պետական հատկացումներից, լրացուցիչ կրթության վարձավճարներից, նվիրատվություններից, առանձին անհատների, կազմակերպությունների ներդրումներից:
23. Կենտրոնի ֆինանսական հաշվառումը կատարում է կրթահամալիրի հաշվապահությունը: